ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/261

«16» Հոկտեմբերի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 24-Ա, 25-Ն.26-Ա 27.-Ա և 28-Ա որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» Հոկտեմբերի 2019 թվականի N 24-Ա

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի հոկտեմբերի 15-ի նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 22-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետի համայնքապետարանի համար ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու մասին:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2019 թ. հոկտեմբերի 15
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Հոկտեմբերի 2019 թվականի N 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեն հաստատելու մասին» N 22-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից 1-5 հատվածների:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 15

հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Հոկտեմբերի 2019թվականի N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի , 1-ին կետով; «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով՝ Ձորագետ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Ընդունել ի գիտություն Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Ձորագետ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի :

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
հ. Ձորագետ

Հավելված

Ձորագետ համայնքի ավագանու

«15»հոկտեմբերի 2019թ. N 26-Ա որոշման

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ձորագետ համայնքի 2019վականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է. Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 4683.4 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 4,372.3 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 107.1%: Ընդ որում՝ Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի վարչական մասով ծրագրված(ճշտված) 4,372.3հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 4683.4 հազար դրամ՝ ապահովելով 107.1% կատարողական:

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 1120.6 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 1499.2 հազար դրամ կամ 133.8%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է 2018 թվականի համապատասխան ցուցանիշից 112.2 հազար դրամով:

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 5404.8 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 63.6%-ը:

Հարկ է նշել, որ 2019 թվականի երրորդ եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Ստորև ներկայացվում է Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Հարկեր և տուրքեր

.- Գույքահարկի գծով երրորդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 448.6հազար դրամ, ծրագրված (ճշտված) 343.2հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 130.7%, որը 2018 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 55.4 հազար դրամով:

- Հողի հարկի մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 62.1 հազար դրամ, նախատեսված 53.9 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 115.2%, որը 2018թվականի փաստացի ցուցանիշից ավել է 6.7 հազար դրամով: -

Տեղական տուրքերի գծով երրորդ եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 733.0հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 708.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 103.5%, որը 2018 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 65.0 հազար դրամով:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 3,184.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 3,251.7հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 97.9%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 3184.2 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեով երրորդ եռամսյակի այլ եկամուտների գծով

նախատեսված 15.5 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 15.5 հազար դրամ, որից.
- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 15,5 հազար դրամ, ծրագրված 15,5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100%,
Մուտքեր տեղական վճարներից
Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի տեղական վճարների գծով նախատեսված մուտքեր չկան , փաստացի հավաքագրվել է 40.0 հազար դրամ,
Մուտքեր տյուժերից և տուգանքներից
Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով փաստացի մուտքը կազմել է 200.0 հազար դրամ,
Ծախսեր
Ձորագետ համայնքի 2019 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 5404.8 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 8495.2 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 63.6%-ը:
Ձորագետ համայնքի 2019 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	3376.3	2806.3	83.1
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	871.0	696.0	79.9
Վարչական սարքավորումներ	1300.0	1200.0	92.3
Պարտադիր վճարներ	100.0	36.0	36.0
Սոցիալական պաշտպանություն	25.0	25.0	100
Շենքերի և շինությունների կառուցում	1822.9	-	-
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	1000.0	998.4	99.8
Ոչ ֆինանսական ակտիվներիր իրացումից մուտքեր	-	-356.9	-
Ընդամենը	8495.2	5404.8	63.6

Զորագետ համայքնի 2019 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	5147.3	4238.3	82.3
Տնտեսական հարաբերություններ	1000.0	641.5	64.1
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	1822.9	-	-
Հանգիստ, մշակույթ և կրոն	500.0	500.0	100
Սոցիալական պաշտպանություն	25.0	25.0	100
Ընդամենը	8495.2	5404.8	63.6

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Հոկտեմբերի 2019թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ձորագետ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ձորագետ համայնքի ղեկավարին՝ Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
3. Ուժը կորցրած ճանաչել Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի մարտի 22-ի թիվ 7-Ա որոշման հավելվածը:
4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
հ. Ձորագետ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ձորագետ համայնքի ավագանու
2019թվականի հոկտեմբերի 15-ի N 27-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 3:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1.	Համայնքի ղեկավար	1	150000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
2	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	1	118000
3	Համայնքապետարանի առաջատար մասնագետ	1	116000
ԸՆԴԱՄԵՆԸ		3	384000

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Հոկտեմբերի 2019թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 42-րդ կետով հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ձորագետ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Ձորագետի համայնքապետարանի կարիքների համար ձեռք բերելու ծառայողական ավտոմեքենա:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
հ. Ձորագետ